ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով դիզելային վառելիքի/այսուհետ Ապրանք/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 14.08.2019 ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/

Հ. Սարոյանը

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Ռ. Տ. Սահակյանը

Հ. Հարությունյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝

Լ.Կաբասակալյանը

Կ. Եսայանը

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. **Ընդունել ի գիտություն.**

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը ՀՀ պետական եկամուտների կոմիտեին /Կոմիտե/ կատարել է հարցում՝ ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջվել է ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ/ պարբերությամբ պահանջվող՝ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը. ապրանքի տեխնիկական բնութագիրը, առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (ամբողջական նկարագիր):

2. Հանձաժողովը արձանագրեց

2.1 Կոմիտեից սահմանված ժամկետում մասնակցի վերաբերյալ՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ստացվել է դրական եզրակացություն **/կցվում է/:**

2.2 Էլեկտրոնային եղանակով ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊ ընկերության կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետում **/կցվում է/:**

3. Հանձնաժողովը որոշեց

3.1 Կոմիտեից ստացված դրական եզրակացությունը և մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.2 Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊԸ 1 /մեկ/ չափաբաժնով ճանաչել **ընտրված մասնակից:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Ռ. Տ. Սահակյան

_____ Հ. Հարությունյան

_____ Լ. Կաբասակալյան

_____ Կ. Եսայան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան